հետ. իրաւ՝ անկէ ետեւ այլ երկու թուղթ կայ, սկիզբէն և վերջէն պակասաւոր, հիւանդութեանց անուանց բացատրութիւն, բայց օտար ձեռքի գիր կ'երեւի :

Աբրահամու վրայօք ուրիշ ծանօթարար չունենալով՝ շատ շնորհակալ պէտք է ըլլանք իրեն, որ իր զրքոյկը սկզբան իր անձին համառօտ ծանօթութեամբ մի տայ, որ է այս.

« Պատմութիւն Անամնոց և Գազանաց,
« Ջորբոտանեաց, Սողնոց և Թիւնաւորաց,
« Թռչնոց և Մարդկան, Ծովային Ձկանց
« և անասնոց և գազանաց, և այլ Ժրժամա-
« կաց ծովու և ցամաքի. Աբարեալ իմաստնոցն
« և հաքիմոցն (բժշկաց) ճարտարացն առա-
« ջնոցն, զբնութիւնն և զշահն և զէնն(զեան).
« և թէ՝ ո՞ր աշխարհ կու լինին, կամ ո՞ր
« ծով կու սնանին, գրեալ են իմաստնոց :
« Զոր ժողովեալ վեց ազգ լեզուաց, Հայոց,
« Հռոմոց, Ֆռանկաց, Առաբաց, Պարսից
« և Թուրքաց, բազում բանիւ և աշխատու-
« թեամբ՝ Աբրահամ քահանայս Կոստանդի-
« նուպոլիս մայրաքաղաքէն, վասն օգտի ու-
« սումնասիրացն : Արդ աղաչեմ զձեզ, հայրք
« և եղբարք իմ, յորժամ կարդայք կամ օ-
« րինակէք, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս
« ձեր յետնեալսն իմաստնասիրացն, զԱբ-
« րահամ քահանայն, և զհայրն իմ Կուլէ-
« միր, և զամենայն արու(առու)արեան
« մերձաւորս իմ. և Տէրն մեր Քրիստոս ի
« միւս անգամ գալստեան իւրոյ զձեզ յիշէ,
« ի յաջակողմեան դասուն արժանի առնէ.
« և զերանաւէտ ձայնիւն զձեզ կոչէ, և
« արքայութեան արժանի առնէ. ամէն : Ըս-
« կիսքն արարի թվին Հայոց ՌԿ (1611—2).
« յոյս ունիմ առ Աստուած որ և ի Հոգին
« սուրբ, որ աւարտ հանից, և խաղաղու-
« թեամբ կատարեցից » :

Այս յիշատակէն զուրս՝ միայն մէկ յիշատակ մ'այլ ծանօթ է ինձ՝ մեր հեղինակին, յորում՝ իր մօր անունն այլ յիշուի, այն այլ իր ձեռօք գրուած է, իբր 28 տարի առաջ՝ Ոսկիփորիկ գրքի մի մէջ՝ որ գտուի ի մեծ գրատան Բարիզու. և է այսպէս, արձակ և ստանաւոր, Բենիկ Վարդապետի Աղօթագրոց համար ըսելով. « ԺԳ (13) տարի
« է որ ցառաջին հաներ և ապա կատարեր
« եմ. զի ՌԼԳ (1584—5) թվին սկսայ և
« ՌԾԸ (1609—10) կատարեցի կարողու-
« թեամբն Աստուծոյ, և աղօթիւք Յեսուանց
« Գրիգորի և Բենիկ սուրբ վարդապետին :
« փառք համագոյ և մի աստուածութեան,
« . . . , կարողութեամբ Ս. Հոգւոյն, որ
« զՈղբերդակս աւարտեցին ձեռքս և մատու-
« ցին ի միասին.

Միաքս այլ ի յետին երկուսկին.
Եւ թէպէտ զովելի չէ գիր սորին,
Այլ գիւրընթերց է գիտողին.
Զոր աղաչեմ ընդ երգեցողին
Յետնեալս յիշել ի յաղօթին.
ԶԱբրահամ քահանայ նուաստ անձին...
Զմարմնաւոր մեր ծնողին,
Հօրըս խօճայ Կուլեմիրին,
Մօրս՝ հաճի մայր Եաղութին,
Այլ և եղբայրս իմ Սինանին.
Օրինակիս մեզ շնորհողին
Զդանիէլ քաջ բարունին.
Հանգուցեալսցն համայնին,
Եւ ամենայն ազգատոհմին.
Զանարժանիս ուսուցողին
Տէր Մելքիսեդ Կրօնաւորին
Եւ ամենայն ազգատոհմին,
Հետ այս գրոցս աշխատողին . . .
Ամենեցուն մասն ի բարին,
Եւ իմ գծողին հետ եղիցին » : . . .

Անշուշտ ուրիշ Կուլամիր է Աւետարանի մի յիշատակարանի մէջ իբրեւ հանգուցեալ յիշուած, յամի 1552, ուր կու պարտաւորի « Կուլամիրի որդին Տէր Կարապետն՝ յա-
« մենայն տարի Կուլամերի հոգոյն՝ զդում մի
« գինի բերէ, Աւետարանին համար բերէ » :
Բայց կրնայ Աբրահամու հայրն ըլլալ « Կու-
« լամիր գալիր » մի, որ յիշուի ուրիշ գրոց մէջ, ուր կայ անոր մօտ 1545 թուականն :

Աբրահամու գրած յիշատակարանաց ոճէն և տառագրութենէն կրնայ գուշակուիլ իր հայրենի լեզուի գիտութեան չափն. իսկ միւս յիշեալ հինգ լեզուաց՝ որով կ'ուզէր կենդանեաց անունները գրել, աւելի պակաս է եղեր գիտութիւնն. վասն զի բաց ի թուրքարէնէ՝ հազիւ մէկ երկուքին օտար լեզուով